**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 27.05.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2020/61

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, համակարգչային տեխնիկայի, դասարանային ուսուցման միջոցների, անջրանցիկ բրեզենտի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 29.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը չկայացած համարելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.04.2020թ.-ին:

30.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/61 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

20.05.2020թ.-ին և 27.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2020թ.-ին:

## 2. «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ն 29.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«1.1 ՀՀ Պաշապանության նախարարության (հետայսու՝ նաեւ Պատվիրատու) գնահատող հանձնաժողովը 2020 թվականի ապրիլի 1-ի թիվ 1 որոշմամբ հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:*

*1.2 Համաձայն հայտարարված որոշման գնանշման հարցումը պետք է իրականացվի մեկ փուլով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:*

*1.3 Ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ սահմանված կարգով պետք է կնքվի «համակարգչային տեխնիկա, դասարանային ուսուցման միջոցներ, անջրանցիկ բրեզենտ»-ի մատակարարման պայմանագիր:*

*1.4 Համաձայն հրավերի ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձեւով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչեւ 2020թ. ապրիլի 10-ը, ժամը 10:00-ը:*

*1.5 Հայտերի բացումը պետք է տեղի ունենա էլեկտրոնային ձեւով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2020թ. ապրիլի 10-ին, ժամը 10:00-ին:*

*1.6 Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «ՍՈԼԻԴ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (հետայսու Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը փորձել է Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներբեռնել մասնակցության հայտը, սակայն այդ նույն համակարգը 2020թ ապրիլի 09-ի 10:00-ից հետո այլեւս ակտիվ չի եղել եւ Ընկերությունը չի կարողացել ներկայացնել մասնակցության համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը եւ մասնակցել ընթացակարգին:*

*1.7 Պատվիրատուն հրավերով նախատեսել է, որ հայտերը կարող են ներկայացվել Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչեւ 2020թ. ապրիլի 10-ը, ժամը 10:00-ն, սակայն նույն համակարգում նշված է եղել, որ հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար ժամանակը սահմանափակված է 2020թ. ապրիլի 09- ին ժամը 10:00-ին եւ հայտերի բացման ամսաթիվն է՝ 2020թ. ապրիլի 09-ի ժամը՝ 10:00-ն:*

*1.8 Պատվիրատուի կողմից հրավերով սահմանվել է օր եւ ժամ, իսկ www.armeps.am համակարգում այլ օր եւ ժամ նշելով եւ մուտքը համակարգ սահմանափակելով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը եւ հնարավոր այլ հայտատուներ առաջարկ չեն ներկայացվել, մասնակցությունը հնարավոր չի եղել:*

*2. Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ցեումեերի գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:*

*Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն 1. Համապատասխան (այդ թվում էլեկտրոնային) փաստաթղթեր կազմելով պետք է ապահովվեն գնմանը վերաբերող տեղեկությունների գրառումը եւ պահպանումը:*

*2. Հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները:*

*3. էլեկտրոնային ձեւով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի եւ փոխգործակցող տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:*

*Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ եւ 11-րդ կետերի համաձայն գնումների հայտարարությունը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝*

*9) հայտեր ներկայացնելու ձեւը, տեղը եւ ժամկետը.*

*11) հայտերի բացման ձեւը, վայրը, օրը եւ ժամը.*

*Վկայակոչված նորմով սահմանված պայմանը պատվիրատուի կողմից իհարկե պահպանվել է, սակայն համակարգը, որի միջոցով պետք է հայտատուները մասնակցեն ընթացակարգին հրավերով սահմանված ժամկետին համապատասխան հասնելի չի եղել:*

*Պատվիրատուն հայտերի ներկայացման համար հրավերով սահմանելով այլ օր եւ ժամ, իսկ ներբեռնող համակարգով մեկ ուրիշ օր ու ժամ, համակարգը հասանելի չի եղել առաջարկ ներկայացնողներին եւ այդ կերպ խտրական մոտեցում է դրսեւորվել:*

*Օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանվում է պատվիրատուի գնահատող հանձնաժողովի լիազորությունները, լիազորությունների ոչ պատշաճ կատարման համար սահմանում է պատասխանատվություն եւ պարտավորություն՝ ապահովելու օրենքի պահանջները:*

*Վերոգրյալով արձանագրում ենք, որ պատվիրատուն չի առաջնորդվել իր լիազորությունների հետեւողական կատարմամբ եւ հրավերով սահմանված ժամկետից մեկ օր շուտ սահմանափակել է հայտերի ներկայացումը www.armeps.am համակարգի միջոցով, այդպիսով գնման ընթացակարգին մասնակիցների թիվը զգալիորեն նվազ է եղել, որն էլ հանգեցրել է օրենքի նպատակի եւ սկզբունքների խախտման:»:*

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը չկայացած համարելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ընկերությունը 18.05.2020թ.-ին ներկայացված լրացմամբ, հավելել է նաև հետևյալը.

*«ԳԲՔԱ-Լ0-2020/61 բողոքի առնչությամբ ՀՀ պաշապանության նախարարությունը հայտնում է, որ*

*1. armeps.am համակարգում կատարել են հայտերի ներկայացման ժամկետի Փոփոխություն, սակայն անհասկանալի պատճառներով փոփոխությունը չի պահպանվել:*

*Այս դիտարկումը, որեւէ ապացուցողական նշանակություն չունի, քանի որ փոփոխություն կատարելու դեպքում այն ամենայն հավանականությամբ կպահպանվեր: Եթե պատվիրատուի կողմից հայտերի ներկայացման ժամկետը չի փոփոխվել, ուստի դրսեւորվել է անհետեւողականություն եւ/կամ անգործություն, որը գնահատվում է օրենքով եւ առաջացնում իրավական հետեւանք: Եթե անգործություն չի դրսեւորվեր ապա կատարված փոփոխության չպահպանման դեպքում պատվիրատուն այդ ժամանակահատվածում պարտավոր էր դիմել լիազոր մարմնին, որպեսզի վերացվեր անճշտությունը:*

*2. Պատվիրատուն պատճառաբանում է, որ վիճարկվող գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել 16 մասնակից եւ, որ բողոքաբերը նույնպես կարող էր մինչեւ 09.04.2020թ ներկայացներ մասնակցության հայտ եւ կարող էր պատվիրատուից պահանջել համապատասխան պարզաբանում անհամապատասխանության վերաբերյալ:*

*Նշված անհամապատասխանության վերաբերյալ մասնակիցը պարտավորություն չի կրում պարզաբանում պահանջել, իսկ պատվիրատուն պարտավոր է առաջնորդվել օրենքով եւ իր կողմից կազմված հրավերի կարգավորումներով: Պատվիրատուն իր պարտավորությունների չկատարման համար մեղադրում է հայտ չներկայացրած մասնակցին, ով չի կարողացել ներկայացնել հայտը պատվիրատուի կողմից իր պարտավորությունները չկատարելու պատճառով:*

*Բողոքաբերը ղեկավարվելով հրավերով սահմանված ժամկետով, այն է հայտերի ներկայացումը մինչեւ 10.04.2020թ ժամը 10:00-ն, փորձել է հայտը ներբեռնել 09.04.2020 թվականին սակայն համակարգը արգելափակված է եղել: Ընկերությունը պարտավոր չէր յուրաքանչյուր օր հետեւել armeps.am համակարգի հասանելիությանը եւ դրա անխափան աշխատանքին: Հայտատուն ինքն է տնօրինում իր ժամանակը եւ կազմում իր աշխատանքային պլանը:*

*3. Պատվիրատուն դիտարկում է, որ 09.04.2020 թվականից 20 օր հետո ներկայացված բողոքն առաջացնում է ապահովման որոշակի խնդիր եւ ընկերությունը չի առաջնորդվում սեփական շահերի պաշտպանությունից:*

*Նման ենթադրություն պատվիրատուի մոտ ինչպես է ձեւավորվել, հավանաբար կներկայացվի իր կողմից: Պատվիրատուի ներկայացրած առարկությունն ամբողջությամբ բովանդակում է մեղադրանք եւ զուրկ է որեւէ իրատեսական օբյեկտիվ հակափաստարկից: Օրենքով եւ հրավերով սահմանված բողոք ներկայացնելու ժամահատվածի ո՞ր տիրույթում կներկայացվի բողոքը, դա բողոքաբերի տնօրինչական իրավունքն է եւ որեւէ մեկի կողմից*

*չի կարող այն սահմանափակվել կամ բողոքի ներկայացման ժամկետը շահարկել սուբյեկտիվ նկատառումներից ելնելով, արդարացումներ որոնելով:*

*Այն, որ բողոքարկվող գնանաշման հարցման մրցույթին այլ մասնակիցների մասնակցության հնարավորությունը սահմանափակվել է պատվիրատուի կողմից, դա ընդունում է նաեւ պատվիրատուն իր դիրքորոշմամբ:»:*

Ելնելով վերոգրյալից և բողոքով ներկայացված փաստական և իրավական հիմքերից, Ընկերությունը Բողքներ քննող անձին խնդրել է ԳԲՔԱ-ԼՕ-2020/61 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 30.04.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6406-2020 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 06.05.2020թ.-ին ներկայացրած թիվ Մ-17394-2020 գրությամբ, ներկայացնելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան Ձեր 30.04.20թ. թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6406-2020 գրության՝ ուսումնասիրելով «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 16.05.2019թ. ներկայացրած № ԳԲՔԱ-ԼՕ-2020/61 բողոքը, հայտնում եմ հետևյալը.*

*ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Համակարգչային տեխնիկայի, դասարանային ուսուցման միջոցների, անջրանցիկ բրեզենտի» ձեռքբերման նպատակով 30.03.2020թ. հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցում, որի հրավերում 31.03.2020թ. և 01.04.2020թ. կատարվել են փոփոխություններ: Արդյունքում փոխվել են նաև հրավերում և armeps.am համակարգում հայտերի ներկայացման ժամկետները, սակայն անհասկանալի պատճառով վերջին փոփոխությունը հայտերի ներկայացման ժամկետի հետ կապված չի պահպանվել armeps.am համակարգում:*

*Տեղեկացնում եմ նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով տասնվեց մասնակիցներ, ինչը նշանակում է, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ն նույնպես կարող էր մինչև 09.04.20թ. ժամը 10.00-ն ներկայացնել հայտ: Ավելին՝ նշված ընկերությունը՝ ունելով հայտերի ներկայացման համար ութ օր ժամանակ, կարող էր նաև պատվիրատուից պահանջել համապատասխան պարզաբանում նշված անհամապատասխանության վերաբերյալ, ինչը սակայն վերջինիս կողմից չի իրականացվել:*

*Միաժամանակ անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված այն, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է 29.04.20թ.-ին, այն դեպքում, երբ վերջինս դեռևս 09.04.20.-ին չի կարողացել ներկայացնել հայտ: Այսինքն՝ բողոքը ներկայացվել է 20 օր հետո, ինչը կարող է նշանակել, որ հիշյալ ընկերությանը հետաքրքրում է ոչ թե սեփական շահերի պաշտպանությունը, այլ ընդամենը տվյալ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը՝ դրանով առաջացնելով ապահովման որոշակի խնդիր:*

*Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքը ենթակա չէ բավարարման:»:*

**4. <u>ԳԲՔԱ-LO-2020/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային տեխնիկայի, դասարանային ուսուցման միջոցների, անջրանցիկ բրեզենտի ձեռքբերման նպատակով 30.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում երկու անգամ կատարվել են փոփոխություններ, սակայն՝ երկու դեպքում էլ հայտերի ներկայացման վերջնաժամկետի՝ հայտերի բացման օրվա փոփոխություն www.armeps.am կայքում չի իրականացվել:

www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի հրավերում 31.03.2020թ.-ին և 01.04.2020թ.-ին կատարվել են փոփոխություններ:

01.04.2020թ.-ի Ընթացակարգի հրավերում կատարված փոփոխության համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև 2020թ. ապրիլի 10-ը, ժամը 10:00-ը:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2020թ. ապրիլի 10-ին, ժամը 10:00-ին:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 21.05.2020թ. թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/10664-2020 հարցման, ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.05.2020թ.-ին թիվ Ն/26-1/10891-2020 գրությամբ հայտնել է, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգի 30.03.2020թ.-ին ժամը 11:56-ին հրապարակելուց հետո պատվիրատուն «Ստեղծել պայմանագրի փաստաթուղթ» գործառույթի միջոցով երկու անգամ իրականացրել է հրավերի փոփոխություն՝ 31.03.2020թ.-ին ժամը 12:32-ին և 01.04.2020թ.-ին ժամը 16:03-ին, սակայն՝ երկու դեպքում էլ հայտերի ներկայացման վերջնաժամկետի՝ հայտերի բացման օրվա փոփոխություն չի իրականացրել: Միաժամանակ հայտնում ենք, որ համակարգը վերոգրյալ գործողությունների կատարման ընթացքում աշխատել է անխափան, և պատվիրատուի կողմից վերոգրյալ գործընթացների իրականացման վերաբերյալ խնդիր ՀՀ ֆինանսների նախարարությունը չի ստացել:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Համապատասխան (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթեր կազմելով՝ պետք է ապահովվեն գնմանը վերաբերող տեղեկությունների գրառումը և պահպանումը:

2. Հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները: Սույն օրենքով սահմանված գործառույթների շրջանակներում հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝

1) հայտարարությունը և հրավերը կարող են տրամադրվել էլեկտրոնային եղանակով,

2) հրավերով նախատեսված դեպքում և կարգով հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

3. Էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած

մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

4. Հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են հետևյալ կանոնները.

1) շահագրգիռ մասնակիցներին մատչելի են հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները.

2) հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանները.

ա. հնարավոր է հստակ որոշել հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը,

բ. նախքան տվյալների փոխանցման համար սահմանված ժամկետները՝ փոխանցված տվյալները մատչելի չեն ոչ ոքի համար,

գ. այն դեպքում, երբ խախտվել է փոխանցված տվյալների մատչելիության արգելքը՝ հնարավոր է հստակ պարզել չարտոնված մուտքը,

դ. ստացված տվյալների բացման ժամկետները կարող են սահմանել կամ փոփոխել միայն լիազորված անձինք,

ե. գնումների ընթացակարգի տարբեր փուլերում՝ ստացված տվյալներին մուտք գործելը հնարավոր է առնվազն երկու լիազոր անձանց (համակարգերի) համաժամանակյա գործողությամբ և միայն սույն կետի համաձայն սահմանված ժամկետից հետո,

զ. սույն մասի պահանջներին համապատասխան ստացված և բացված տվյալները պետք է մատչելի մնան միայն դրանց ծանոթանալու լիազորություն ունեցող անձանց համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից համակարգչային տեխնիկայի, դասարանային ուսուցման միջոցների, անջրանցիկ բրեզենտի ձեռքբերման նպատակով 30.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում երկու անգամ կատարվել են փոփոխություններ, սակայն՝ երկու դեպքում էլ հայտերի ներկայացման վերջնաժամկետի՝ հայտերի բացման օրվա փոփոխություն www.armeps.am կայքում չի իրականացվել:

www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի հրավերում 31.03.2020թ.-ին և 01.04.2020թ.-ին կատարվել են փոփոխություններ: 01.04.2020թ.-ի Ընթացակարգի հրավերում կատարված փոփոխության համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև 2020թ.-ին ապրիլի 10-ը, ժամը 10:00-ը: Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2020թ.-ին ապրիլի 10-ին, ժամը 10:00-ին:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 21.05.2020թ. թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/10664-2020 հարցման, ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.05.2020թ.-ին թիվ Ն/26-1/10891-2020 գրությամբ հայտնել է, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգի 30.03.2020թ.-ին ժամը 11:56-ին հրապարակելուց հետո պատվիրատուն «Ստեղծել պայմանագրի փաստաթուղթ» գործառույթի միջոցով երկու անգամ իրականացրել է հրավերի փոփոխություն՝ 31.03.2020թ.-ին ժամը 12:32-ին և 01.04.20թ.-ին ժամը 16:03-ին, սակայն՝ երկու դեպքում էլ հայտերի ներկայացման վերջնաժամկետի՝ հայտերի բացման օրվա փոփոխություն չի իրականացրել: Միաժամանակ հայտնում ենք, որ համակարգը վերոգրյալ գործողությունների կատարման ընթացքում աշխատել է անխափան, և պատվիրատուի կողմից վերոգրյալ գործընթացների իրականացման վերաբերյալ խնդիր ՀՀ ֆինանսների նախարարությունը չի ստացել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/61 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-5/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**